

«Միխիթար Սեբաստացի» կրթահամալիր  
Պատմություն  
7-9 դասարաններ

Դասավանդման նպատակներ՝

1. ՀՀ քաղաքացու ձևավորման առաջին փուլի ավարտ;
2. Սովորողների կողմից իրականության միասնականության և պատմական ժամանակաշրջանների ոչ գծային հերթագայության գաղափարների յուրացում;
3. Պատմական օրինաչափությունների, նրանց դրսևորման առանձնահատկությունների և պատմական դեր խաղացած էթնոսների յուրահատկությունների իմացություն;
4. Նախապատրաստություն ավարտական քննություններին:

Դասավանդման ընթացքում լուծվելիք խնդիրներ՝

1. Հարց ձևակերպելու, հարցին կոնկրետ պատասխանելու, հասկացություններ սահմանելու, տեսակետ հայտնելու և պաշտպանելու, իրականության բաղկացուցիչների փոխազդեցության ընթացքը հետազոտելու կարողությունների ու հմտությունների ձևավորում և զարգացում;
2. Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման գործընթացի անընդհատության ապահովմանը միտված կամքի կայունացում;
3. Մտային գործունեության ոլորտում սովորողի համագործակցային կարողությունների և հմտությունների ամրակայում;
4. Արգելված և այլընտրանքային պատմության իմացություն;
5. Անցյալի գիտական և գեղարվեստական վերակառուցման իրականացում;
6. Սովորողի նախաձեռնողականության և հասարակական ակտիվության խթանում;
7. Սովորողների օժտվածության բացահայտում, զարգացում և հանրայնացում:

Առանցքային առանձնահատկություններ՝

1. Անցյալի ուսումնասիրությունն օրինաչափությունների հենքի վրա;
2. Միակողմանիության բացառում;
3. Առարկայի ուսումնասիրության հետազոտական ուղղվածություն:

#### Մանկավարժական մոտեցումներ

1. Ուսումնական բովանդակության միակողմանիության բացառում;
2. Սովորողի անհատականությունը կրթական գործընթացի գործոն;
3. Նախագծային ուսուցում;
4. Թվային միջոցներն աշխատանքային գործիք;
5. Հումորը և ոչ ստանդարտ առաջադրանքները սովորողի կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման ամենօրյա խթան:

#### Միջավայր

1. Ֆիզիկական միջավայր /դասասենյակ, լաբորատորիա,բակ, զբոսայգի, թանգարան, արխիվ, աշխարհագրական և պատմական օբյեկտներ, կրթական և գիտական հաստատություններ; նեթբուք, նոթբուք, պլանշետ և այլ գաջետներ/;
2. Վիրտուալ միջավայր /կայքեր, բլոգեր, սոցցանցեր և էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներ/:

#### Ուսուցման կազմակերպումը

1. Դաս-քննարկում;
2. Համատեղ դաս այլ մասնագետի հետ;
3. Ինտերակտիվ դաս;
4. Տարատարիք սովորողների համատեղ դաս;
5. Դասի նախապատրաստություն սովորողի կամ սովորողների խմբի հետ;
6. Դասի վերլուծություն սովորողի կամ սովորողների խմբի հետ;
7. Համատեղ դաս այլ կրթական հաստատության սովորողների հետ;
8. Արտակրթահամալիրային մասնագետի դաս;
9. Պատմական վերակառուցման դաս;
10. Դաս-շնորհանդես;
11. Արշավային դաս:

Կապն ուրիշ դասընթացների հետ  
Գիտության պատմությունը „Պատմություն,, առարկայի բաղկացուցիչն է և  
դասավանդվելու է մյուս առարկաների ու դասընթացների մասնագետների հետ միասին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(7- րդ դասարան)

1. Մարդկության առաջին քայլերը – 9 ժամ

1.1. Մարդու առաջացումը – 1

1.2. Մարդու առաջին զբաղմունքները եւ գործիքները – 1

1.3. Առաջին դպրոցները եւ քննությունները – 2

1.4. Գիտության եւ արվեստի հիմնարկերը – 2

1.5. Հասարակական կյանքի կազմակերպումը – 1

1.6. Առաջին ոսկեդարի ավարտը – 1

1.7. Ամփոփում – 1

2. Հնագույն քաղաքակրթություններ – 15 ժամ

2.1. Արիական քաղաքակրթություն – 3

2.2. Արատտան արիական քաղաքակրթության բարձրակետ – 1

2.3. Մեմական քաղաքակրթություն – 2

2.4. Եգիպտական քաղաքակրթություն – 1

2.5. Շումերական քաղաքակրթություն – 1

2.6. Չինական քաղաքակրթություն – 2

2.7. Հայկյան Հայաստան – 3

2.8. Գիրք քաղաքակրթության անկյունաքար – 1

2.9. Ամփոփում – 1

3. Հունական քաղաքակրթությունը արդի Արեւմուտքի օրորոց եւ հայկական վերջին աշխարհակալությունը – 17 ժամ

3.1. Կրետե- միկենյան մշակույթ – 1

3.2. Հոմերոսյան Հունաստան եւ Ծովի ժողովուրդներ – 1

3.3. Վանի (Արարատյան) թագավորություն – 2

3.4. Աթենք եւ Սպարտա. հակադրամիասնություն – 2

3.5. Հունական մշակույթ – 2

3.6. Անհատի դերը պատմության մեջ. Արիստոտել եւ Ալեքսանդր Մակեդոնացի – 2

3.7. Հելլենականություն – 1

3.8. Հայկական հելլենականությունը եւ դրա հետեւանքները – 3

3.9. Աշխարհակալություններ. համեմատական բնութագիր – 2

3.10. Ամփոփում – 1

4. Հին Հռոմ. աշխարհակալության անփառունակ ավարտի ապացույց եւ հին Հայաստան. արմատներից հրաժարվելու ճանապարհին– 14 ժամ

4.1. Արքայական Հռոմից հանրապետական Հռոմ – 1

4.2. Սոցիալ-էթնիկական պայքար. պատրիկ-պլեբեյան պայքարից մինչեւ Սպարտակի ապստամբությունը – 2

4.3. Հռոմ եւ Կարթագեն, Հռոմ եւ Հայաստան. քաղաքակրթությունների պայքարի զուգահեռներ – 3

4.4. Անհատի դերը պատմության մեջ. Կեսար եւ Բրուտոս – 1

4.5. Հոռմեական կայարություն – 2

4.6. Հոռմեական մշակույթ – 2

4.7. Հայկական մշակույթը հեթանոսական շրջանի վերջին փուլում – 2

4.8. Ամփոփում – 1

5. Համաշխարհային կրոնների դարաշրջանը – 14 ժամ

5.1. Քրիստոնեական հեղաշրջումը Հայաստանում – 1

5.2. Պետության կործանում եւ մշակույթի ծաղկում. պարադոքս, թե՞ հայկական առանձնահատկություն – 1

5.3. Ժողովուրդների մեծ գաղթը որպես էթնիկական հեղափոխություն – 1

5.4. Քրիստոնեական եկեղեցին Եվրոպայում – 1

5.5. Հոռմեական կայարության փլատակների վրա – 1

5.6. Հունա-հայկական Բյուզանդիան. քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ -2

5.7. Գերմանական ազգի հոռմեական սրբազան կայարություն – 1

5.8. Անհատի դերը պատմության մեջ վաղ միջնադարում – 1

5.9. Իսլամի առաջացումը եւ ծավալումը – 2

5.10. Իսլամը եւ հայերը – 1

5.11. Արաբական խալիֆաթը եւ Հայաստանը – 1

5.12. Ամփոփում – 1

6. Նոր մտածողության շեմին – 2 ժամ

7. Դասընթացի կրկնություն – 2 ժամ

Պատմություն (8 – ըրդ դասարան)

1. Միջնադարը ծաղկման ժամանակաշրջանում – 18 ժամ

1.1. Ավատատիրական հասարակության օրինաչափությունները եւ առանձնահատկությունները-1

1.2. Բագրատունյաց Հայաստան. տնտեսություն, քաղաքականություն, մշակույթ, ավատատիրական առանձնահատկությունները-3

1.3. Հայկական վերածնունդ – 2

1.4. Հայ-բյուզանդական հարաբերությունները ետանկախական շրջանում – 1

1.5. Ավատատիրական Արեւելք – 2

1.6. Քոչվորական կայսրություններ – 1

1.7. Հայաստանը եւ քոչվորները – 2

1.8. Կիլիկյան Հայաստան. տնտեսություն, քաղաքականություն, մշակույթ, ավատատիրական առանձնահատկությունները-3

1.9. Խաչակրաց արշավանքները քաղաքակրթությունների բախման դրսևորում – 2

1.10. Ամփոփում – 1

2. Միջնադարի մայրամուտը – 14 ժամ

2.1. Հայկական քաղաքակրթության մայրամուտը. կյանքը հայաբնակ տարածքներում 14-17 դդ.-ում-2

2.2. Հարյուրամյա պատերազմ – 1

2.3. Բյուզանդիայի անկումը եւ դրա քաղաքակրթական հետեւանքները – 2

2.4. Ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը եւ դրա քաղաքակրթական հետևանքները-2

2.5. Աշխարհագրական մեծ հայտնագործությունները եւ դրանց քաղաքակրթական հետևանքները-2

- 2.6. Եվրոպական վերածնունդ. քրիստոնեության վերջի սկիզբը – 2
- 2.7. Ռեֆորմացիան եւ նրա հայկական արմատները – 2
- 2.8. Ամփոփում – 1
- 3. Նոր ժամանակներ. հեղափոխությունների փուլը – 12 ժամ
- 3.1. Հեղափոխությունների սոցիալ-տնտեսական նախադրյալները – 1
- 3.2. Նիդեռլանդական հեղափոխություն – 1
- 3.3. Անգլիական հեղափոխություն – 2
- 3.4. Ամերիկյան հեղափոխություն – 2
- 3.5. Ֆրանսիական հեղափոխություն – 2
- 3.6. Հայկական ազատագրական շարժման նոր փուլը. նախադրյալներ, էթնիկական եւ աշխարհաքաղաքական իրողություններ, նվիրյալներ – 2
- 3.7. Դավիթ Բեկի անկախական շարժումը եւ ձախողման ներքին ու արտաքին պատճառները-1
- 3.8. Ամփոփում – 1
- 4. Աշխարհը 19-րդ դարում – 17 ժամ
- 4.1. Նապոլեոնյան պատերազմներ – 1
- 4.2. Միապետների դաշինքն ընդդեմ ժողովուրդների ու դրա հետեւանքները – 1
- 4.3. Ֆրանսիական հեղափոխությունների շարքը – 2
- 4.4. Ազգային պետությունների ձեւավորումը – 2
- 4.5. ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմը եւ դրա անմիջական ու ոչ անմիջական հետեւանքները-2
- 4.6. Ֆրանս- պրուսական պատերազմը. աշխարհաքաղաքական շրջադարձ – 1

4.7. Համաշխարհային մշակույթ – 2

4.8. 19-րդ դարի հայ իրականությունը – 5

4.9. Ամփոփում – 1

5. Աշխարհը դեպի աշխարհամարտ տանող մայրուղում – 9 ժամ

5.1. Հակամարտ դաշինքների ձևավորումը – 2

5.2. Ռուսական առաջին հեղափոխությունը և նրա հետեւանքները – 2

5.3. Հայ ժողովուրդը ցեղասպանությունից ցեղասպանություն տանող ճանապարհին-2

5.4. 19-րդ դարն ավարտվում է 1914 թվականին – 2

5.5. Ամփոփում – 1

6. Դասընթացի կրկնություն – 3 ժամ

Պատմություն (9 – րդ դասարան)

1. Առաջին աշխարհամարտ – 9 ժամ

1.1. Աշխարհամարտ. օրինաչափություն, թե՞ նպատակադրված սադրանք – 1

1.2. Պատերազմող խմբավորումների նպատակները և ռեսուրսները – 1

1.3. Պատերազմի ընթացքը – 1

1.4. Հայերի մասնակցությունն առաջին աշխարհամարտին – 1

1.5. Հայոց Ցեղասպանություն. պատճառներ, ընթացք, հետեւանքներ – 2

1.6. Ինքնապաշտպանություն և Նեմեփս – 1

1.7. Առաջին աշխարհամարտի անմիջական հետեւանքները – 1

1.8. Ամփոփում – 1



2. Աշխարհը եւ հայերը երկու աշխարհամարտերի միջակայքում – 13 ժամ
  - 2.1. Հայոց առաջին հանրապետությունը եւ նրա դասերը – 2
  - 2.2. Կործանված կայսրությունների փլատակների վրա – 1
  - 2.3. Գերմանիան, Իտալիան եւ Խորհրդային Միությունը բռնապետության ճիրաններում. համեմատական վերլուծություն – 1
  - 2.4. Արթնացող Արեւելքը եւ հիվանդ Արեւմուտքը – 1
  - 2.5. Իսպանիա. պարտված ժողովուրդ – 1
  - 2.6. Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական նվաճումները եւ բարոյագրկումը – 2
  - 2.7. Համաշխարհային մշակույթը – 2
  - 2.8. Հայկական մշակույթը – 2
  - 2.9. Ամփոփում – 1
3. Երկրորդ աշխարհամարտ – 7 ժամ
  - 3.1. Արժեքային համակարգերի բախում, թե՞ նոր նպատակադրված սադրանք – 1
  - 3.2. Պատերազմող խմբավորումների նպատակները եւ ռեսուրսները – 1
  - 3.3. Պատերազմի ընթացքը – 2
  - 3.4. Հայերը եւ երկրորդ աշխարհամարտը – 1
  - 3.5. Երկրորդ աշխարհամարտի անմիջական հետեւանքները – 1
  - 3.6. Ամփոփում – 1
4. Երրորդ աշխարհամարտ (Մառը պատերազմ) – 12 ժամ
  - 4.1. Մառը պատերազմի քաղաքակրթական, գաղափարախոսական, տնտեսական եւ քողարկված նպատակները – 1

- 4.2. Մառը պատերազմի հիմնական իրադարձությունները – 1
- 4.3. Մշակույթը սառը պատերազմի տարիներին – 2
- 4.4. Երրորդ աշխարհի պետությունների ընդհանրությունները եւ առանձնահատկությունները – 2
- 4.5. ՀԽՍՀ- ն ազգային զարթոնքի ճանապարհին – 1
- 4.6. ՀԽՍՀ- ի տնտեսական հաջողությունները եւ հիմնախնդիրները – 1
- 4.7. Հայկական մշակույթ – 2
- 4.8. Հայկական սփյուռք – 1
- 4.9. Ամփոփում – 1
- 5. Չորրորդ աշխարհամարտ (գլոբալացում եւ հակագլոբալիզմ)- 10 ժամ
  - 5.1. Գլոբալացման նախադրյալները – 1
  - 5.2. ԽՍՀՄ կործանման պատճառները եւ ընթացքը – 1
  - 5.3. Հայկական ազատագրական պայքարի նոր փուլը. նախադրյալներ, ռեսուրսներ, ընթացք, առաջին ենթափուլի ամփոփում – 2
  - 5.4. Երրորդ հանրապետություն. համալիր ակնարկ – 2
  - 5.5. Աշխարհը 21-րդ դարում. ներկա եւ ապագայի մարտահրավերներ – 2
  - 5.6. Տեղեկատվական հասարակություն, թե՞ նոր մարդաստեսակի քաղաքակրթություն – 1
  - 5.7. Ամփոփում – 1
- 6. Ավարտական քննության նախապատրաստություն – 18 ժամ